

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Армянские беллетристы. Сборникъ изданный подъ редакціей Юрія Веселовскаго и Минаса Версераана. Томъ первый: Մեծ քառածալ, 518 էջ. Москва, тип. т-ва И. Н. Кушнеревъ и К^о, 1893 զինն է 1 ա. 75 կ. (Հայ վիպասաններ: Ժողովածու, հրատարակած Իւրի Վեսելովսկու և Մինաս Բերբերեանի [սմբարութեամբ]):

Միտքը ստեղծած է հաղորդելու համար. նույնն է և գեղարվեստը, որով մտքերը արտապատում են: Եւ մի գրականութիւն որ իւր մէջ պարունակում է միտք, զգացմունք, գեղարւեստ,—վաղ թէ ուշ կը դառնալ սեպհականութիւն ամբողջ մարդկութեան, Գորա համար պէտք է որ այդ գրականութիւնը, իւր ներքին բովանդակութեան ու ձևի կողմից՝ բաւականաչափ բարձր զգացումներ լարուցանէ, որպէս զի բոլոր ազգերին, ամբողջ մարդկութեան կողմից հաւասարապէս ընդունւի որպէս մարդկութեան գանձ առ հասարակ: Հալոց վիպական նոր գրականութիւնը բուսած հայկական հողի վրայ, սնւած հայկական գաղափարներով, չատկացրած հալ ժողովրդի պէտքերին, այսօր առաջին փորձերն է տեսնում՝ լուսաւոր մարդկութեան

դատաստանի առաջը բերելու և քննելու: Բայց նույն խկան ֆակտը, որ այդ փորձերը անուում են և խրախուսանք գտնում, ցուց է տալիս որ այդ գրականութեան արժանաւորութիւնը գէթ մինչ մի չափնի աստիճան արդէն ճանաչած է և վկայւած, Գա միտքարական է մանաւանդ հալոց ազգի համար, նորա պատմական կեանքի ներկայ բողէներում. դա կարևոր է նորա ինքնազգացմունքի համար:

Արևելեան հալոց նոր բելլետրիստիկան իւր աւելի քան 35 ամնալ գոյութեան ընթացքում, արտաչափել է բանաստեղծութեան, վիպասանութեան և թատերագութեան ձևերով: Իւր տենդենցիալի և բովանդակութեան կողմից, այդ գրականութիւնը դիմել է հայրենական—ազգայինին. ալրտեղ փալել են Աբովեան, Մերենց, Բաֆֆի, իրանց

գլխաւոր վէպերում և Գամառ-Քաթիպա, իւր բանաստեղծութիւններին մէջ. Ժողովրդական վարքանկարագրութեանը, որի գլխաւոր ներկաւացուցիչներն են Պոօչեան և Աղաւեանց, իրանց գլխաւոր վէպերում, հասարակականին, որի գլխաւոր ներկաւացուցիչներն են Սուեղոսիան գրամալի մէջ, դեռ ևս երիտասարդ Շիրվանշաղէն վէպի մէջ, Պարոնեան և Պատկանեան սատիրալի մէջ. վերջապէս մանկական-բարոյախօսականին՝ որի ներկաւացուցիչն է Աղաւեանց՝ գլխաւորապէս իւր հեքիաթներին մէջ.

Եթէ այս անունները վրայ աւելացնենք նաև Շահ-Աղլիին և Պեշիկթաշեանին, — մենք արդէն լրացրած կը լինենք թէ արեւելեան և թէ արեւմտեան հայոց գեղեցիկ գրակաւութեան գլխաւոր ներկաւացուցիչներին ցանկը, որքանով որ նոքա արդէն հանրալին նշանակութիւն են ստացած հայերի մէջ, չ'ուրձիւ նոցա անկասկածելի տաղանդի և ցալժմ արտադրած գործերի:

Եւ օտարներին մեր ներկաւացնելիքը բնլիտրիստիկալից — դոցա գործերն են: Աւելի հեռուն գնալ կը նշանակէր հրապուրել:

Ներկալ հատորը առաջին մեծ փորձն է ուսուսաց հասարակութեանը ծանօթացնելու հալ բնլիտրիստներին հետ: Աղ գործը անուում է գերմաներէնի համար փորձ անելուց լետու: Յալանի է որ պ. Արգար Յալհաննիսեանի հրատարակութեամբ դեռ 80-ական թւականներին լուստեսան Armenische Bibliothek-ի մօտ տասնեակ գրքովները, որոնք բովանդակում էին մեր նորագոյն

վիպասանների գրամքները, լաջող ընտրութեամբ: Ռուսերէնի հրատարակութեան համար գլխաւոր գործիչը հանդիսանում է պ. Իւրի Վեսելովսկին, ընկերութեամբ պ. Մինաս Բերբերեանի: Պարոն Վեսելովսկին լաւ նախապատրաստած է երեսում ալղ դերի համար, անցեալ տարի ուսուսաց «Արտիստ» գեղարեստական ամսաթերթում հահրատարակեց մի ընդարձակ աշխատութիւն հալ թատրերգութեան մասին, արժանի նաև հալերի ուշադրութեանը, քանի որ նմանը չ'կալ նոյն իսկ հալ գրակաւութեան մէջ:

Պէտք է ասած, որ հալ գրողներից հա, ով առաջին և գլխաւոր պատճառն է եղել, որպէս զի հալական բնլիտրիստիկան թարգմանաբար արլի օտարներին, և միևնույն ժամանակ հա, ով ամենից շատ է հետաքրքրել օտարներին՝ դա է Բաֆֆին: Մեղանում Բաֆֆին ամենածողովրդական գրողն է, հա իւր վերալ դարձրեց ընդհանուր ուշադրութիւն, և ոչ միայն հալերի, ալ և օտարների մէջ: Ռաների մէջ, իւր մահից լետու, հա գտաւ կենսագրող, լանձին տիկին Նեկրասովալի. հա գտաւ հալերի մէջ թարգմանողներ՝ Յ. Վերմիշե և Կարա-Մուրզա. վերջինս անցեալ 1892 թ. լուս ընծալեց «Ոսկի Աքաղաղը» ռսերէն լեզուլ, (որ մասմաս տպուում էր Թիֆլիսի Новое Обозрение թերթում), չհաշած այն թարգմանութիւնները և կենսագրական լողածը, որ տպած են ներկալ ժողովածու մէջ: Ահա ինչու մենք չենք զարմանում, որ Վեսելովսկու և Բերբերեանի ալս հաստ հրատարա-

կութեան մէջ, որ 509 մեծագիր էջեր է պարունակում, կէսից աւելին (260 էջ) բռնում է Բաֆֆին:

Ներկայ հատորում զետեղւած են կենսագրութիւնները և գլխաւոր գրած քննրից քաղածօրէն, իսկ մանրերից՝ ամբողջութեամբ թարգմանութիւններ խ. Արտվանից, Պերճ Պռօշեանից, Բաֆֆիից, Ռ. Պատկանեանից, Յակոբ Պարոնեանից, Մերենցիից և Ղազարոս Աղայեանից: Կէսից աւելին, որպէս նկատեցի վերը, բռնում է Բաֆֆին, մնացած կէսը բռնում են միւսները:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, առաջին հատորի մէջ չեն մտել բոլոր այն հեղինակները, որոնք, մեր վերը ասածին համեմատ, հաստատ տեղ են բռնել մեր նոր բեկեարիստիկայի մէջ, Չգիտեմ ինչ հեղինակներ են զետեղւել խոստացած երկրորդ հատորի մէջ, բայց եթէ այդ երկրորդ հատորը առաջին չափ է լինելու և ինչպէս չառաջաբանում ասած է՝ նորա մէջ տեղ են բռնելու նորագոյն հալ բեկեարիստներին գրուած քննրը, — այն ժամանակ մենք առաջուց կարող ենք գուշակել այդ երկրորդ հատորի անչաղողութիւնը: Դեռ ևս դրականութեան մէջ ամուր և վերջնական տեղ չգրաւած հեղինակների գրւածները անտեղի ենք համարում օտար հասարակութեան առաջը դնելու: Այլապէս մենք ցանկացած օգուտը չենք տեսնում, թերևս դեռ մնաս էլ լինի՝ սեկլամներ անելով իրանց ուղին դեռ ևս բաւականաչափ չհարթած հեղինակների համար:

Ներկայ առաջին հատորի մէջ զե-

տեղւած կենսագրութիւններից շատ ւաջողւած են մանաւանդ Վեսելովսկու գրած Արտվանցի և Բաֆֆիի կենսագրութիւնները և նոցա վէպերի գնահատութիւնը. Վեսելովսկու լօղածների մէջ կալ մի ինչ որ համակրելի տաքութիւն, առանց որ նա դորա համար դուրս դալ քննադատի սահմաններից: Նա գիտէ նաև ոգևորւել անկեղծ ոգևորութեամբ: Տօբադդաբար նոյնը չենք կարող վկայել պ. Բերբերեանի մասին, որը կենսագրութիւնը հասկանում է պանդխտիկայի մտքով: Այսպէս օրինակ Պերճ Պռօշեանցին նւիրւած լօղածում մենք ստիպւած էինք բազմաթիւ հարցականներ դնել: Առհասարակ նկատենք, որ կենսագրողները լիզուր են իրանց համար կոչում համարում կենսագրւած հեղինակին ամեն դէպքում սուրբ դուրս բերել: Այսպէս, օրինակ, կեանքի ամեն մի դէպք, որ անախորժ է եղած մեր վիպասանին, պ. Բերբերեանը առանց պլեսպլութեան բացատրում է լօղուտ նորա և ընդդէմ ուրիշներին:

Աչքի է ընկնում նաև պ. Բերբերեանի շատ շնչուած համակրութիւնը դէպի մեղանում որոշ, բայց և անհամակրելի ուղղութեան պատկանող դործիչներն ու գրողները, որոնց անունները տալիս՝ պ. Բերբերեանը անպատճառ մի դիպլոմակին ածական պէտք է կպցնի: Եթէ դա, օրինակ, պ. Արգար Յովհաննիսեանն է, նա կ'ասի տաղանդաւոր խմբագիր (էջ 31), եթէ Պռօշեանցին է, նա չի բաւականանալ եղածով, այլ թէ կուզ նա զուրկ էլ լինի հրապարակախօսի շնորհքից, բայց և

ալնպէս նա նորան կը հռչակի իբրև տաղանդաւոր հրապարակախօս. եթէ դա Մատթէոս Մամուրեանն է, պ. Բերբերեանը չի նապիլ ոչ մի հանգամանքի և առաց ալ և ալլութեան կը թխի՝ տաղանդաւոր հրապարակախօս և լուսաւորած մանկավարժ Մամուրեան (էջ 446):

Անճշգուծութիւնները լինինք ալն, որ պ. Վեսելովսկին սխալմամբ ընդունել է իբր Բաֆֆիի չորեքեանը շտօնւեց, մինչդեռ նա տօնւեց ժողովարարութեան և պարզեաների ու ուղերձների ձևով, թէև ոչ մի օրւալ հանդիսով. և ալ մանաւանդ ուշադրութեան արժանի է, որ Բաֆֆին մեղանում առաջինն եղաւ, որ արժանացաւ չորեքեանական ընդհանուր ցուցերին: Գորա հակառակ պ. Բերբերեանը տօնել է տալիս պ. Պաօշեանի չորեքեանը, մինչ դեռ ճշմարտութիւնը ալ է, որ ալ չորեքեանի համար 1889-ին մի մասնաժողով կազմուեց, սակաւն չգործեց, որքան մեղ լալտնի է:

Խնդիր կարող է լինել թէ որ-

քան նպատակաւարմար է ալն ձևը, որ արած է ներկալ ժողովածուն, ուր ալ և ալ վէպերից միալն հատհատ գլուխներ են թարգմանւած: Անկասկած է, որ գերմանական Armenische Bibliothek-ի ձևը գերադասելի է, քանի որ նորա ամեն մի հատորիկը մի ամբողջութիւն է կազմում: Բալց և ալնպէս ուր հասարակութեան ալժման պահանջի համար ներկալ ժողովածուն իւր հատընտիր ձևով ոչ միալն կարող է օգտակար լինել և գուցէ լինի աւելի ևս հետաքրքրական: Հետաքրքրութիւն չարժելու տեսակէտից՝ պ. պ. Վեսելովսկու և Բերբերեանի ժողովածուն մեծապէս աջողած պէտք է համարել:

Մի վերջին նկատողութիւն ևս բերելտրիտ չի նշանակում միալն վիպասան, ալ և ոտանաւորով գրող բանաստեղծներ, գրամատուրգներ և ալն, որոնք դուրս են դրած ներկալ հատորից:

Ա. Ա.

Հեղ. Ն. Ա. Ա. ? , փոխադրեց Գրիգորիա Երզնկեանց. — Թւաբանական խնդիրներ և օրինակներ: Տարրական դասընթացք. ա. և բ. տարի, 1892 թ., 108 էջ, դինն է 30 կոպէկ:

Պ. Գրիգորիա Երզնկեանցը իր աշխատութեան լառաջաբանի մէջ լալտնում է, որ օգտել է Գնդենբերգի դասագրքից, աշատ փոփոխութիւններ անելով (?) և բոլորովին ինքնուրուլն ձև տալով (?) մեր գլու-

ղական և քաղաքալին մանկանց կեանքի պալմանների համաձալնու: Տեսնենք թէ որքան ճշմարտութիւն է պարունակում ալ խօսքերի մէջ:

Պ. Գնդենբերգի դասագրքում